

Ալինա Փահլևանյան (Հայաստան)

արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր

ՀՀ արվեստի վասպակավոր գործիչ

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԵՐԳ «ՎՈՒՅ ԱԼԵՔՍԱՆ»

Արդարև, հայ ժողովրդական բանահյուսության վիպական ժանրի երաժշտական ստեղծագործություններն այնքան փոքրաքանակ են, որ յուրաքանչյուր նորահայտ նմուշ անգնահատելի նշանակություն է ստանում ազգային երաժշտագիտության համար: Այդպիսի նմուշներից է «Վոյ Ալեքսան» վիպերգը, որը, ինչպես և «Կարոս խաչը», պահպանվել է Պարսկաստանում՝ Վասպուրականից գաղթածների շրջանում և այժմ տողերիս հեղինակի վերծանմամբ և նոտագրմամբ դրվում է գիտական շրջանառության մեջ:

XX դարի 60-ական թվականներին վիպերգը, որքան հայտնի է, երկու անգամ ծայնագրվել է Թեհրանում մագնիտաֆոնային ժապավենի վրա. մեկը՝ Հայկակ Կոստյանի, իսկ մյուսը՝ Հայկ Աճեմյանի՝ կատարմամբ:

Հ. Կոստյանը եղել է XIX դարի Վանի հերոսամարտի ղեկավարներից մեկը: Պահպանվել է նրա գրած հոդվածը «Երկու խօսք «Վոյ Ալեքսան» հերոսային ժողովրդական խաղերգի մասին», որը լույս է տեսել Թեհրանում հրատարակվող «Ալիք» օրաթերթում 1960 թ. սեպտեմբերի 1-ի և 4-ի համարներում: Հեղինակի հավաստմամբ՝ նա այն լսել և սովորել է Աղթամարում պաշտոնավարած ժամանակ, ընդ որում լսել է երկու տարբերակով, սակայն թերթում հրապարակել է միայն երկրորդ տարբերակի տեքստը: Նա գրում է. «Այժմ, երբ Վասպուրականը պարպած է հայությանից, չկան ակն ու ականքը հայ ժողովրդական

¹ **Հայկ Աճեմյան** (1898–1965)՝ գրող, գրականագետ, բանահավաք, մանկավարժ, հրապարակախոս, հասարակական գործիչ: Նրա կատարմամբ «Վոյ Ալեքսան» վիպերգը ծայնագրվել է Թեհրանում 1961 թ.:

բանահիստութեան, քողերիս ստորագրողը «Վրյ Ալեքսան» բանահիստական պատարոհը կորստից փրկելու համար, կէս դար առաջ լսածս ու անգիր սովորածս եղանակի հետ ծայնագիր ժապաւնի վրայ առնել տալով, թէկուզ անյաջող ծայնով, թողնում եմ որպէս մի մասունք հետագայի մեր երգահանների բարոք մշակման»: Յավոք, հնարավոր չեղավ գտնել այդ ծայնագրությունը, որը թույլ կտար ծանոթանալ նաև Հ. Կոստյանի տարբերակի երաժշտական մարմնավորմանը:

Հ. Աճեմյանի տարբերակի համեմատությամբ Հ. Կոստյանի տարբերակն ավելի ծավալուն է, սակայն, քանի որ չկա այդ տարբերակի մեղեդային տարրը, հասկանալի չէ, թե ինչպէս է կատարվել այն: Արդյոք ամբողջապէս է երգվել, թե՞ վիպական ասքի նման պատմողական հատվածներն ընդմիջվել են երգեցողությամբ: Իսկ Հ. Աճեմյանի տարբերակը նման է ամբողջապէս երգված դյուցազներգի, որը, սակայն, բովանդակության իմաստով ամբողջական տպավորություն չի ստեղծում:

Երկու խոսք վիպերգի հերոսի և պատումի բովանդակության մասին:

Ալեքսանը XIX դարի հայ ազատագրական պայքարի հերոսներից է: Ծնվել է Վասպուրականի Շատախ գավառի գյուղերից մեկում: Վաղ տարիքում որբացած տղայի խնամքը ստանձնել է իր քավորկիները: Մեծանալով՝ քաջ պատանին քավորկնոջից ստացել է մի ձի ու հրացան: Նա դարձել է գյուղի պաշտպանը հրոսակների ավազակային հարձակումներից և վայելել գյուղացիների սերն ու հարգանքը:

Քուրդ ավազակային խմբերը վախենում էին մոտենալ «ծուռ» Ալեքսանենց գյուղի սահմաններին: Մի անգամ, օգտվելով Ալեքսանի բացակայությունից, որը դաշտում գործ էր անում, ավազակները հարձակվում են գյուղի վրա, կողոպտում եկեղեցին, քում, տանում գյուղի տավարն ու ոչխարը: Գյուղ վերադարձող Ալեքսանը, իմանալով աղետի մասին, վերցնում է հրացանը, հեծնում իր ձին և ընկնում կողոպտիչների ետևից: Հասնելով նրանց՝ նա կոչ է անում վերադարձնել ավարը: Պատասխան չստանալով՝ նա մի կրակոցով գետին է գլորում

ավագակապետին՝ խուճապի և փախուստի մատնելով մյուսներին։ Ավարը վերադարձվում է գյուղ՝ ի ուրախություն գյուղացիների։ Դժգոհ է միայն սարսափած քահանան, որը վախենում է, որ Ալեքսանի արարքը կարող է «զուլում բերել գյուղի գլխին», թշնամություն դնել հայերի և քրդերի միջև՝ մոռանալով, որ քրդական հրոսակախմբերի ավագակային մշտական հարձակումները սոցիալական մեծ չարիք ու պատուհաս են եղել հայ գյուղացիների համար։ Իսկ լեռնցի հայ քաջերի դիմելը զենքին ստիպողական պահանջ է եղել կյանքի և գոյության ոտնահարված իրավունքը պաշտպանելու համար։

Ահա «Վրյ Ալեքսան» դյուցազներգի Հ. Կոսոյանի տարբերակի տեքստը։

Գուժկան.

Վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան,
Հաւարճ, հաւարճ, լոյ-լոյ հաւարճ...

Քաւորկինն է կանչում.

Վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան,
Քրդերն էկան թալան թախթափ արին,
Տարան զմեր գեղի մալ-միւլք,
Վալլանհ կասեմ, տարան զմեր գեղի սուրբ կրօնք,
Վալլանհ կասեմ, քշին, տարան զմեր գեղի քօլ եզը...
Վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան:

Ալեքսան՝ քաւորկնկան.

Քաւորկին, քաւորկին, տիւ իմ մէրն իս,
Տիւ իմ քիւրն իս,
Քեզ պան մ'ասեմ, շուտ էրա,
Վալլանհ կասեմ, վազի գնա յօդէն վէ,
Առ պարից կախած զճակ,
Պիր տուր զԱլեքսան...
Վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան:

Քաւորկին փեշեր քշտից, գեաւերն էթալ,

Գնաց յօդէն վէ, առից զճակ, պիրաւ տաւ զԱլեքսան...

Վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան:

Ալեքսան առից զճակ, վազից զշուն քրդու յիտաւնց,

Կանչեց. «Լօ– լճ, լօ– լճ, լօ– լճ,

Դիւր կտանիս զմեր գեղի մալ–միւլք,

Վալլահ կասեմ, դիւր կտանիս զմեր գեղի սուրբ կրօնք,

Դիւր կըքշիս, տանիս զքօլ եզ...»:

Վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան:

Քիւրդ Հասօն չիսօ ձէն չէտու...

Ալեքսան ըռգաւ, ըռգաւ, ըռգաւ ու քոխաւ,

ըռգաւ ու քոխաւ, ըռգաւ ու քոխաւ,

Ծունկ էզարկ գետին, քէշից զհրացանի պէճօկ,

զշուն Հասօն գլորից գետին...

Վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան:

Ձեպ որ լսեց գեղի տէրտէր, ծնկիւր տփից,

ձեռքեր կցից, մուրուս քէշից,

Էկաւ կայնաւ Կարմիր փլան վերէն ու կանչից.

«Վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան,

Տիւ չծլիս, տիւ չծաղկիս, տիւ չջբրիս, տիւ խէր չխիս,

Էս ինչ զուլում բերիր մեր գեղի գլխին,

Իտին տարուվ ինչ դիւմնութիւն դրիր հայ ու քրդութնի մէջ...»,

Վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան, վրնյ Ալեքսան:

Ալեքսան զայրացած.

Վրնյ տէրտէր, վրնյ տէրտէր,

Արաղ խմիր սարսղիր իս, գինի խմիր ծանծղիր իս,

Էկեր կայներ Կարմիր փլան վերէն,

Գլխից պօշ–պօշ տիւս կիտաս,

*Վալլահ կասիմ, տիւ չէնիր խոգւերական մեր ճօշխէր,
Ես տպոնի զքո մուրուս, քէշի մէջ տլին...
Վհոյ Ալեքսան, վհոյ Ալեքսան, վհոյ Ալեքսան:*

Հ. Կոստյանը տեքստի վերջում տալիս է մի քանի բարբառային բառերի բացատրությունը. «*Թախթափ* – եղած–չեղածը կողոպտել: *Սուրբ կրօնք* – եկեղեցու սրբազան անօթներ: *Քոլ եզ* – կօտոշները չզարգացած: *Ճակ* – զենք, հրացան: *Գեաւէր* – քայլեր: *Ըոգաւ* – խոռվեց: *Քոխաւ* – զայրացավ: *Պէճօկ* – հրացանի բլթակը: *Չքրիլ* – կենք չունենալ: *Տիլ* – տիղմ»:

Հ. Կոստյանը հավաստում է, որ «Վհոյ Ալեքսան» վիպերգը Լեռնապարի, այսինքն՝ Վասպուրականի Շատախ, Մոկս, Ոզմ, Կարկառ, Ռշտունիք և մյուս գավառների գյուղերում շատ սիրելի ժողովրդական երգերից է եղել: Այդ երգը «*իր գոռ ձայնով հաճախ երգում էր նաև Լեռնապարի հայդուկ ղեկավար՝ Վանա իշխանը (Նիկոլ Պողոսյանը)*»:

Մեկ այլ նշանավոր վասպուրկանցի՝ Հերոս Գաբրիելյանը², Վանի ապրիլյան հերոսամարտի 80–ամյակի առիթով Լոս Անջելեսում 1995 թ. թողարկած՝ «Վասպուրականի տոհմիկ և գավառական երգեր» ձայներիգի բացատրական թերթիկում կարծիք է հայտնում, թե «Վհոյ Ալեքսան» վիպերգը Կոմիտասի մշակմամբ իր համերգներում երգել է հոջակավոր երգիչ Արմենակ Շահմուրադյանը: Այս կարծիքը Հ. Գաբրիելյանը հայտնում է՝ հենվելով դերասան Մ. Մարությանից ստացած տեղեկության վրա, ինչն, անշուշտ, դեռ ստուգման կարիք ունի:

Բերենք այժմ Հ. Աճեմյանի երգած տարբերակի նոտագրությունը, որը մենք կատարել ենք Հ. Գաբրիելյանի տրամադրած մագնիստաֆոնային ժապավենից: Վիպերգի խոսքերը նույնպես Շատախի բարբառով են:

² **Հերոս Գաբրիելյան**՝ վաստակաշատ ուսուցիչ, Լոս Անջելեսի Համա-Վասպուրականի Հայրենակցական Միության Վարչության անդամ, «Վարազ» պարբերականի հրատարակիչներից մեկը, հասարակական գործիչ: Նա տողերիս հեղինակին տրամադրել է «Վհոյ Ալեքսան» վիպերգի ձայնագրությունը և հարակից որոշ նյութեր:

$\text{♩} = 168$

Ա՛, վույ Ա - լեք-սան, վույ Ա - լեք-սան, վույ Ա - լեք-սան, վույ Ա - լեք -

սան, So, տը-նա - տիր, քըր-դիրն է - կան, թա - լան է - րին,

թաղ-թաղի է - րին, տա - րան ըզ - մեր կե - դի մալ-միւք, տա - րան ըզ - մեր

կե - դի քոլ եզ: Վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք-սան,

վույ Ա - լեք-սան:

Վույ Ա - լեք - սան, So, տը - նա - տիր,

տիւ են ինչ կե-նիր, տիւ են ինչ իշ-կիր իր.

տօ, տեր - տեր, վայ տեր - տեր, վայ տեր - տեր, կի - նի խը-մեր իս,

ծան - ծը-դիր իս, ա - րաղ խը-մեր իս, շը - փո - թիր իս:

Ա՛ - - - - -

Ա - լեք-սան ըո - կաւ, ըո - կաւ, ըո - կաւ, ըո-կաւ ու քըո-խաւ,

ըո - կաւ ու քըո - խաւ, քեա - դեց ըզ - հրա - ցան, գար - կեց մեջ քըր -

դու սրբ - տին, ըզ - քիւրդ կը - լո - րեց մաշտ կե - տին:
 Վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք - սան...
 Նա որ տե - սաւ տէր - տէր, վա - գեց է - կաւ, ծընկ - վիր խը - փից,
 կը - լեօխ գար - կից, ը - սաւ՝ "տօ, տը - նա - վիր Ա - լեք - սան, տիւ էն ին - չըր
 է - քիր, դուշ - մը - նաւ - թէն տը - քիր մե - քին քըր - դու մի - ջն":
 Վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք - սան:
 Ա - լեք - սան ըռ - կաւ, ըռ - կաւ, ըռ - կաւ, ըռ - կաւ, ըռ - կաւ ու քըռ -
 խաւ, ըռ - կաւ ու քըռ - խաւ, ըռ - կաւ ու քըռ - խաւ, սաց՝ "տօ, տնա - վիր
 տէր - տէր, կի - նի խը - մեր իս, ծան - ծը - դիր իս, ա - րաղ խը - մեր իս,
 լն - գուղ կապ - վիր ի: Այ տէր - տէր, տիւայդ սեւ - սեւ տնա - վիր լաւ - քըռով,
 սեւ - սեւ մօ - րուս - քըռով հա - յոց ազ - գի տուն աւ - քըռ - ցիր":
 Վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք - սան, վույ Ա - լեք - սան:

Ուսումնասիրելով և համեմատելով վերը նշված երկու տարբերակը՝ նկատում ենք, որ դրանք շատ մոտ են միմյանց և կարծես բովանդակության առումով լրացնում են իրար: Եթե ենթադրենք, որ Հ. Կոստյանի տարբերակում նույնպես երգվում են միայն այն հատվածները, որոնք երգել է Հ. Աճեմյանը, ապա կստացվի, որ գործ ունենք ոչ թե ամբողջապես եղանակավորվող **վիպերգի**, այլ **վիպական ասքի** հետ, որտեղ առկա են ոչ միայն երգեցողությունը, այլ նաև պատմողական (այսինքն՝ արտասանությամբ ներկայացվող) տարրը, որը պատումի բովանդակությանը տրամաբանական զարգացում տալով՝ ամբողջացնում է այն և ավելի հասկանալի դարձնում, ինչը պակասում է Հ. Աճեմյանի տարբերակում:

Ինչևիցե, թերևս հետագա որոնումները հնարավորություն կտան հայտնաբերել Հ. Կոստյանի երգած տարբերակի ձայնագրությունը և գուցե նաև նոր կատարումներ, որոնք կհարստացնեն մեր պատկերացումներն այս վիպական ստեղծագործության մասին:

«Վրյ Ալեքսան» վիպերգը, ստեղծվելով XIX դարի կեսերին, դրսևորում է ոչ միայն համեմատաբար նոր ժամանակների հայ երաժշտական վիպական մտածողության գծերը, այլ նաև կապը դարերով ձևավորված վիպասանական ավանդույթի հետ: Չնայած մեղեդու բնույթը ասերգային է, սակայն զուրկ չէ քնարական տարրերից՝ ձայնաստիճանների եղանակավորումներից, ծորերգություններից: Հետաքրքրական է, որ այստեղ առկա է միջնադարյան վիպական ավանդույթից եկող ասացման կերպը. պատումը ժամանակ առ ժամանակ ընդմիջվում է յուրատեսակ կրկնակի դեր կատարող, բովանդակության իմաստը շեշտող և հուզական լիցք պարունակող արտահայտությամբ («Վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան, վրյ Ալեքսան»): Հիշեցնենք, որ «Կարոս խաչ» վիպական ասքում դա մերթ ընդ մերթ կրկնվող «*Ժառայ կէլնեմ Կարոս խաչին, մեռնեմ իր շարիկ խրաշքին*», իսկ «Մոկաց Միրզա» վիպերգում՝ «*Հազար ափսոս Մոկաց Միրզեն*» և «*Բեմուրադ կեներ Կոլոյր Փաշեն*» խոսքերն են: Հնուց

ձևավորված ասացողական այդ հնարը կարծես ավելի մեծ վիպական շունչ է հաղորդում պատումին:

Հետաքրքրական է վիպերգի մեղեդու զարգացման տրամաբանությունը. այստեղ դիտվում է կվարտային բարձրակետից դեպի հիմնաձայն աստիճանական վարընթաց շարժում, որի ընթացքում բոլոր աստիճանները շրջագարդվում են վերևի և ներքևի հնչյունների օգնությամբ: Բանաձևը հետևյալն է.



Բացի դրանից, ասերգությունը պարունակում է մեկ այլ բանաձև՝ շարժում ներքևի ձգտող աստիճանից կվարտային թռիչքով դեպի մեղիանտա և ապա վերադարձ դեպի հիմնաձայն:



Այս երկու բանաձևն ի թիվս մի շարք ուրիշների Կոմիտասը բերում է իր «Հայ գեղջուկ յերաժշտություն» հոդվածի «Յերգեցողություն» բաժնի «Յերգեր» ենթաբաժնում³, որտեղ ցույց է տալիս, թե ինչպիսի փոփոխությունների կարող են ենթարկվել հայ գեղջուկի պատկերացումների մեջ դարերով ձևավորված և հիշողության մեջ պահպանվող մեղեդային որոշակի տիպական դարձվածքները: Այս հոդվածում նա փաստորեն ներկայացնում է հայ ազգային երգամտածողության համար առավել բնութագրական մեղեդային բանաձևերը, այդ թվում նաև վերը բերված երկուսը:

Վիպերգի հիմքում ընկած է կվարտային օժանդակ հենակետով հիպոդորիական–եռլական ձայնակարգը.

³ Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, կազմող՝ Ռ. Թերլեմեզյան, Երևան, Հայպետհրատ, 1941, էջ 33–44:



Վիպերգի ծայնածավալը բավական մեծ է, հասնում է մեկ օկտավի, սակայն ծայնաշարը կազմում է մեկ հեպտախորդ: Հիմնածայնից վեր ընկած հատվածը ներկայացնում է պենտախորդ «օդային» սեպտիմայով, այսինքն՝ այստեղ բացակայում է 6-րդ աստիճանը: Սա ևս բնութագրական երևույթ է հայեցի երգամտաճողության համար, քանի որ ժողովրդական երգերում ծայնաստիճանները սովորաբար շրջազարդվում են ոչ միայն հարևան, այլ նաև տերցիայի տարածության վրա գտնվող հնչյուններով՝ դրսևորելով դրանց յուրատեսակ ձգողականությունը: Այստեղ 7-րդ աստիճանը շրջազարդող է 5-րդ աստիճանի համար:

Ինչ վերաբերում է վիպերգի ռիթմիկայի կազմակերպմանը, ապա այստեղ գործ ունենք հնագույն ֆոլկլորին բնորոշ ազատ ժամանակաչափության հետ, այսինքն՝ կարճ և երկար տևողությունների հարաբերության, որի կազմակերպող տարրը խոսքն է, հայերեն բառը, որի շեշտը միշտ համընկնում է երկար տևողության հետ: Եվ քանի որ այդ շեշտված վանկը չնչին բացառությամբ գտնվում է բառավերջում, ապա հասկանալի է, որ, օրինակ, երկվանկ, եռավանկ, քառավանկ բառերը եղանակավորվելիս ստանում են յամբական բնույթի համապատասխան ռիթմական ոտքեր՝ յամբ (◡ /), անապեստ (◡ ◡ /), չորրորդ պետն (◡ ◡ ◡ /):

Նոտագրության մեջ իբրև կարճ ռիթմական միավոր ընդունված է ութերորդականը, իսկ երկարի տևողությունը կրկնակի է, երբեմն շատ ավելի մեծ, ինչը չի հակասում կվանտիտատիվ ռիթմիկայի ընդունված օրենքներին:

Վիպերգի ճկուն և արտահայտիչ ռիթմը դառնում է հերոսի հոգեվիճակի փոփոխության նրբին անդրադարձը. երբ պատմվում է, թե Ալեքսանը հուզվեց՝ իմանալով կատարվածի մասին, մեղեդին

դեռ ընթանում է համեմատաբար հանդարտ («ըռգաւ, ըռգաւ»), այնուհետև տևողությունները կոտորակվում են, ընթացքն արագանում է՝ արտահայտելով խռովքի վերածումը աճող զայրույթի («ըռգաւ ու քոխաւ, ըռգաւ ու քոխաւ, ըռգաւ ու քոխաւ»)։ Պատահական չէ նաև, որ այստեղ արտահայտությունը կրկնվում է երեք անգամ։ Այս հնարը կումուլյատիվ (կուտակային) նշանակություն ունի և արտացոլում է հույզի աճը։

Այսպիսով, այս վիպերգում ևս, ըստ դարերով ձևավորված վիպական ավանդույթի, կատարված դեպքի մասին անաչառ պատմությունը զուգորդվում է ասացողի հուզական վերաբերմունքի արտահայտության հետ, ինչն առանձնահատուկ երանգ է տալիս ստեղծագործությանը։ «Վոյ Ալեքսան» վիպերգի ընդհանուր և երաժշտալեզվական տարրերի քննությունը ցույց է տալիս, որ այն, պատկանելով նոր ժամանակների վիպական ստեղծագործությունների թվին, գալիս է լրացնելու պատկերացումը հայ ժողովրդական վիպական երաժշտական մտածողության պատմական զարգացման ուղու մասին և այդ իմաստով ֆոլկլորագիտական և պատմագիտական մեծ նշանակություն ունի։

Ամփոփում

Հոգվածն անդրադառնում է հայ ժողովրդական բանահյուսության վիպական ժանրի քիչ պահպանված երաժշտական մի ստեղծագործության՝ «Վոյ Ալեքսան» վիպերգին, որը, ինչպես և «Կարոս խաչը», պահպանվել է Պարսկաստանում՝ Վասպուրականից գաղթածների շրջանում։ XX դարի 60-ական թվականներին այս վիպերգը երկու անգամ ձայնագրվել է Թեհրանում մազնի-տաֆոնային ժապավենի վրա, մեկը՝ Հայկակ Կոսոյանի, իսկ մյուսը՝ Հայկ Աճեմյանի կատարմամբ։ Վիպերգը գիտական շրջանառության մեջ է դրվում հոգվածի հեղինակի վերծանմամբ և նոտագրմամբ։

Հիմնաբառեր՝ հայ ժողովրդական բանահյուսություն, վիպերգ, «Վոյ Ալեքսան», Հայկակ Կոսոյան, Հայկ Աճեմյան։

Prof. Alina Pahlevanyan (*Armenia*)
PhD in Art, Honored Worker of Arts of RA
Komitas State Conservatory of Yerevan

VUY ALEK'SAN: THE ARMENIAN FOLK BALLAD

Abstract

This article presents a new invented work from Armenian folkloristic culture, which is entitled *Vuy Alek'san*. Any sample belonging to the genre of ballad itself is noteworthy, because not many samples have been survived in the oral tradition. This ballad (as well as the famous *Celery Cross*) was preserved among Armenians in Iran, among the emigrants from Vaspurakan region. In 60s of the XX century, this ballad was recorded twice in Tehran, on the recording tape. One of them was performed by Haykak Kosoian, and the other one by Hayk Achemian. Here, the music score of the ballad is presented to the scholarly field as transcribed by the author of the article.

Keywords: Armenian folk poetry, epic song, Vuy Alek'san, Haykak Kosoian, Hayk Achemian.